ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 75 - 76 (16776) ՇԱԲԱԹ 21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆԸ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

Սեպտեմբերի 16-ին աշխատանքային այցով Թբիլիսիում էր գտնվում Եվրամիության հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման հարցերով եվրահանձնակատար Յոհաննես Հանը:

Այցի շրջանակներում, Եվրամիության հանձնակատարին ընդունեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան: Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստան-Եվրամիություն Ասոցիացման պայմանագրի, համապարփակ համաձայնագրի կիրարկման կոնկրետ քայլերին, բռնազավթված տարածքներին եւ երկրում ժողովրդավարության զարգացման ուժեղացմանն առնչվող հարցեր:

Հանդիպման ավարտին հաջորդած համատեղ մամլո ասուլիսում, Գիորգի Գախարիան նշեց, որ Եվրամիությանը ինտեգրման գործընթացը Վրաստանին կբերի մեծ արդյունքներ:

- Իհարկե, մենք զրուցել ենք բռնազավթման մասին, շնորհակալություն ենք հայտնել Եվրամիությանը այն ներկայության ու գործառույթների համար, որոնք նրանք իրականացնում են բռնազավթված կողմում: Նշել ենք, որ երկու կողմերն էլ պետք է անեն հնարավորը, որ մանդատը տարածվի ամբողջ տարածքով, ինչը կօգնի պաշտ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՅՈՀԱՆՆԵՍ ՀԱՆ. «ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ» ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ, ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՕՐԻՆԱԿ»

Սեպտեմբերի 16-ին Եվրամիության հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման հարցերով եվրահանձնակատար Յոհաննես Հանը, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլու, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի հետ, մասնակցեց Թբիլիսիում, Լիսի լճի հարակից տարածքում, ԵՄ-ի չափանիշներով «Եվրոպական դպրոցի» նոր շենքի եւ հանրակացարանի կառուցման վայրում խորհրդանշական հիմնարկեքի արարողությանը, դրեց խորհրդանշական պարկուճը:

Ըստ Յոհաննես Հանի, դիպլոմը, որը ուսանողները կստանան «Եվրոպական դպրոց»-ում, կճանաչվի աշխարհի բոլոր համալսարաններում:

- Ես երջանիկ եմ, որ մեկ տարի անց կրկին այցելել եմ այստեղ: Սա Եվրամիության տարածքից դուրս առաջին նմանատիպ դպրոցն է: Մենք ամեն ինչ անում ենք, որ դպրոցը լինի բազմալեզու: Ամե-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՆՈՐԱՆԿԱԽ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Սեպտեմբերի 18-ին Քութայիսիում, հանդիսավոր պայմաններում, կայացավ նորանկախ Վրաստանի առաջին պետական միջազգային համալսարանի հանրակրթական տարածքի բացման շնորհանդեսը:

Արարողությանը ներկա էին եւ ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլին, համալսարանի հիմնադրումը ֆինանսավորող «Քարթու» հիմնադրամի նախագահ, «Վրացական երա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)



ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍԿՍՎԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Սեպտեմբերի 16-ին Վրաստանի հանրակրթական հաստատություններում, բուհերում, մանկապարտեզներում մեկնարկեց նոր՝ 2019-2020 ուսումնական տարին:

Նոր ուստարվա մեկնարկի առաջին զանգը հնչեց երկրի շուրջ 54,6 հազար առաջին դասարանցիների համար, իսկ, ընդհանուր առմամբ, սեպտեմբերի 16-ին դպրոց մուտք գործեց շուրջ 591,8 հազար աշակերտ:

Սեպտեմբերի 16-ին սկսված նոր ուսումնական տարին կավարտվի 2020 թվականի հունիսի 12-ին: Եվ սակայն, շրջանավարտների ու առաջին դասարանցիների համար ուսումնական տարվա վերջին զանգը, համապատասխանաբար, կհնչի մայիսի 20-ին եւ 27-ին:

Նոր ուսումնական տարվա առիթով, բոլոր առաջին դասարանցիներին ու նրանց դասվարներին՝ որպես նվեր, հանձնվեց բարելավված տեխնիկական հնարավորություններով հագեցած համակարգիչներ: Մինչեւ տարեվերջ շուրջ 400 դպրոցներում կավարտվի համացանցով եւ համակարգիչներով դպրոցների հագեցման գործընթացը եւ կշարունակվի առաջիկայում

(Թեմայի շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Սեպտեմբերի 21-ին Հայաստանն ու համայն հայությունը նշում է Անկախության հռչակման 28-րդ տարեդարձը:

Հայաստանի Անկախության մասին հռչակագիրն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում՝ 1990թ. օգոստոսի 23-ին: Հռչակագրով լուծարվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, եւ հռչակվեց անկախ Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ, 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրաքվե անցկացվեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին: Ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների 94,99 տոկոսը «կողմ» քվեարկեց անկախությանը:

Սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ:

Ի տարբերություն նախորդ տարիների, այս տարի Անկախության տոնի անցկացման էպիկենտրոնը Գյումրին է:

Անկախության տոնին նվիրված միջոցառումներ կազմակերպվելու են նաեւ Երեւանում ու Հայաստանի այլ մարզերում:

ՆՈՐ ՇՈՒՆՉ՝ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆՍՏԱՎԱՅՐ ՎԵՀԱՐԱՆԻՆ

ԿԱՅԱՑԱՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԱԾ ՎԵՀԱՐԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կայացավ հիմնանորոգված Վեհարանի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի նստավայրի հանդիսավոր բացման արարողությունը:

Միջոցառմանը ներկա էին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը՝ տիկնոջ՝ Նունե Սարգսյանի հետ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների պաշտոնյաներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵՆ ՀԱՆԴԻՊԵՑ ՌՈՒԲԵՆ ՍԱՂՈՅԱՆԻ ՀԵՏ

Սեպտեմբերի 18-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սաղոյանի հետ:

Հանդիպմանը Վրաստանի խորհրդարանի նախագա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆԸ ԾՈՒԾԱԲԵՐԱՇ ԱՋԱԿԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պանել մարդու հիմնական իրավունքները եւ ապահովել նրանց անվտանգությունը: Մենք խոսեցինք նաեւ երկրում ժողովրդավարական գործընթացների շարունակման մասին եւ պայմանավորվեցինք, որ երկրում ժողովրդավարության հիմնական գործառույթներն ու արժեքները կպաշտպանվեն եւ կամրապնդվեն,- ասաց Վրաստանի վարչապետը:

Իր հերթին, Յոհաննես Հանը հայտարարեց, որ վարչական սահմանին այսպես կոչված Հարավային Օսեթիայի հետ կետերում, որոնք հրատապ են դառնում բորդերիզացիայի համար, մեզ համար անընդունելի է, եւ Եվրամիությունը կշարունակի աջակցել Վրաստանի ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանը միջազգայնորեն ճանաչված սահմաններում:

- Առանց կասկածների կամ որեւէ լրացուցիչ մտքի, մենք պահպանում ենք գիծը Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության նկատմամբ միջազգայնորեն ճանաչված սահմաններում: Հարավային Օսեթիայի հետ վարչական սահմանի երկայնքով այս կետերը, որոնք գնալով կարեւոր նշանակություն են ստանում բորդերիզացիայի համար, մեզ համար անընդունելի են: Վրաստանը պետք է լինի ուժեղ եւ միավորված: Ներկայիս մարտահրավերների ֆոնի ներքո այս խնդիրները արդիական են,- հայտարարեց Եվրահանձնակատար Յոհաննես Հանը:

ԿՐԹԱԿԱՆ

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՆՈՐԱՆԿԱԽ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

զանք-Ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին: Բուհի հանակրթական տարածքի շնորհանդեսին ներկա էին նաեւ Վրաստանի գործադիր եւ օրենսդիր մարմինների, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Իր խոսքում վարչապետը առանձնակի կանգ առավ կրթության կարեւորության վրա՝ ընդգծելով, որ միայն կրթության վրա հիմնվելով հնարավոր է ապահովել երկրի կայուն զարգացումը:

- Այլ կերպ մենք ուղղակի չենք կարողանա 21-րդ դարում առանձին ոլորտների մրցունակությունն ապահովել: Մեր երիտասարդների համար էլ կծագեն դժվարություններ: Ուստի, առաջին հերթին հարկ է շնորհակալություն հայտնել «Քարթու» հիմնադրամին, Բիձինա Իվանիշվիլուն այն նշանակալի բարեգործության համար, որ կատարեցին, եւ հուսով ենք, որ առաջիկայում կտեսնենք այս համալսարանի շրջանավարտներին,- նշեց վարչապետը:

Համալսարանի հանրակրթական տարածքի շնորհանդեսին Բիձինա Իվանիշվիլին իր ելույթում հիմնականում կանգ առավ երկրի ապագա զարգացման գործում կրթության վիթխարի նշանակության վրա:

- Վրաստանի քաղաքացիների բացարձակ մեծամասնությունը քաջատեղյակ է, որ մեզանում կրթությունը նույնքան նշանակալից է, որքան օդն ու ջուրը: Միայն կրթությունն է այն լծակը, որի շնորհիվ մեր երիտասարդները կկարողանան վերականգնել մեր հայրենքի մեծությունն ու վեհությունը: Մեզ նման երկրի համար միայն կրթությունն է այն գլխավոր ռեսուրսը, որը հիմնելու է զարգացման ռազմավարությունը: Դեռեւս մեկ տարի առաջ ես եւ իմ ընտանիքը սկսեցինք խորհել եւ երազել, որ Վրաստանում հիմնենք արդի եւ տեխնոլոգիապես հզոր հանրակրթական օջախ, որն իր մեծ ազդեցությունը կունենա երկրի կրթական ու գիտական հարթակում,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին:

Նշենք, որ Քութայիսիի միջազգային համալսարանը ուսանողների առաջին հոսքը կընդունի 2020 թվականի սեպտեմբերին: Համալսարանի բացման գաղափարը պատկանում է Բիձինա Իվանիշվիլուն: Նախագիծը, որի շնորհանդեսն անցկացվեց 2016 թվականի սեպտեմբերի 8-ին, լրիվությամբ ֆինանսավորում է միջազգային բարեգործական «Քարթու» հիմնադրամը, եւ դրա բյուջեն ենթադրաբար կազմում է մեկ միլիարդ եվրո:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵՆ ՀԱՆԴԻՊԵԾ ՌՈՒԲԵՆ ՍԱՊՈՅԱՆԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հը եւ Հայաստանի դեսպանը կարեւորեցին երկու բարեկամ երկրների խորհրդարանների միջեւ ակտիվ շփումն ու համագործակցությունը:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց վրաց-հայկական միջխորհրդարանական բարեկամության խմբի հայաստանյան պատվիրակության՝ Վրաստան կատարելիք առաջիկա այցին, ինչպես նաեւ Վրաստանի խորհրդարանի նախագահի՝ Հայաստան կատարելիք պաշտոնական այցին: Սույն ենթատեքստում կարեւորվեց փոխայցելությունների եւ միջխորհրդարանական բարեկամության խմբերի միջեւ կապերի ակտիվացման նշանակությունը:



ՄԱԿ

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻՆ ԽՈՍՔՈՎ ՀԱՆԴԵՍ ԿԳԱ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 74-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

Սեպտեմբերի 17-ին Նյու Յորքում բացվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հերթական՝ 74-րդ նստաշրջանը: Այն կշարունակվի մինչեւ հաջորդ տարվա սեպտեմբերի 17-ը: Առաջիկա քննարկումների ուշադրության կենտրոնում 170-ից ավելի հարցեր են, որոնք ներառում են գլոբալ բոլոր խնդրիները՝ տարածաշրջանային սուր հակամարտություններից մինչեւ արդիականության հանգուցային տնտեսական, բնապահպանական եւ հումանիտար մարտահրավերները:

ՄԱԿ-ում առավել հագեցած շրջանը կդառնա հաջորդ շաբաթը, որի ընթացքում տեղի կունենան բարձր մակարդակի ընդհանուր քաղաքական բանավեճեր: Ամբիոն կբարձրանան 114 պետությունների ղեկավարներ, ինչպես նաեւ կառավարությունների ու դիվանագիտական ներկայացուցչությունների 80-ից ավելի ղեկավարներ, որոնց ելույթներն ավանդաբար կպայմանավորեն Գլխավոր ասամբլեայի աշխատանքն առաջիկա ողջ տարվա ընթացքում:

Վրաստանի անունից այս տարի գերագույն բանավեճին կմասնակցի նաեւ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

ՍԱՈՒԴՅԱՆ ԱՐԱԲԻԱ ՀԱՐՁԱԿՈՒՄ՝ ՆԱՎԹԱՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Սեպտեմբերի լույս 14-ի գիշերը Saudi Aramco-ի՝ Սաուդյան Արաբիայի ազգային նավթաընկերության ձեռնարկությունները ենթարկվեցին դրոնների գրոհի: Մասնավորապես, հարձակման է ենթարկվել աշխարհի խոշորագույն Saudi Aramco նավթաընկերության նավթավերամշակման համալիրը, որը գտնվում է երկրի արեւելքում: Դա հանգեցրել է Սաուդյան Արաբիայում նավթի հանույթի կիսով չափ կրճատման՝ օրական 5,7 միլիոն բարելով: Հարձակման պատասխանատվությունն ստանձնել են եմենցի հուսի ապստամբները, սակայն ԱՄՆ-ը կասկածում է նրանց մեղսակցությանը եւ պատահածի համար մեղադրել է Իրանի իշխանություններին:

Իր հերթին, Թեհրանն անհիմն է համարում Սաուդյան Արաբիայի նավթային օբյեկտների վրա գրոհներին երկրի մեղսակցության վերաբերյալ ԱՄՆ-ի հայտարարությունները եւ մերժում է այդ մեղադրանքները:

ՀԱՐՑՈՒՄ

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ

NDI NATIONAL DEMOCRATIC INSTITUTE FOR INTERNATIONAL AFFAIRS

Ամերիկայի Միացյալ Նահանգների Ազգային դեմոկրատական ինստիտուտը (NDI) հուլիսի 13-29-ն ընկած ժամանակահատվածում, Վրաստանի մասշտաբով (բացառությամբ՝ օկուպացված տարածքների) հարցում անցկացրեց: Մեծ Բրիտանիայի կառավարության UK aid-ի ֆինանսական աջակցությամբ անցկացված NDI-ի հետազոտություններն իրականացրեց CRRC-Վրաստանը: Հարցմանը մասնակցել է 2131 մարդ, վիճակագրական անճշտությունը կազմել է 1,7 տոկոս:

Հարցման արդյունքներով, բնակչությանը հուզող գլխավոր հիմնախնդիրները մնում են անփոփոխ՝ դրանք են աղքատությունն եւ գործազրկությունը:

ՀՈՌԵՏԵՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆԸ

NDI-ի ուսումնասիրության համաձայն, Վրաստանում հարցվածների 63 տոկոսը գտնում է, որ երկրի տնտեսական դրությունը վատ է: Հետազոտության տվյալներով, հարցման մասնակիցների 31 տոկոսը հայտարարում է, որ երկրի ներկայիս տնտեսական դրությունը միջին աստիճանի է, տնտեսական դրությունը լավ է համարում 4 տոկոսը:

Ինչ վերաբերում է տնտեսական հավասարությանը, ապա 70 տոկոսը գտնում է, որ Վրաստանի տնտեսությունն օգուտ է բերում միայն մարդկանց որոշակի խմբի, 12 տոկոսն ասում է, որ Վրաստանի տնտեսությունն օգուտ է տալիս բոլոր քաղաքացիներին հավասարապես, իսկ 9 տոկոսի կարծիքով՝ Վրաստանի տնտեսությունը ոչ ոքի օգուտ չի տալիս:

ԳԵՐԱԿԱ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Ազգային-ժողովրդավարական ինստիտուտի» (NDI) հետազոտության համաձայն, հարցվածների 78 տոկոսն աջակցում է Վրաստանի Եվրամիությանն ինտեգրմանը: 14 տոկոսը բացասական վերաբերմունք ունի եվրաինտեգրման հարցում, իսկ 8 տոկոսը այդ հարցում հստակ դիրքորոշում չունի:

Ինչ վերաբերում է ՆԱՏՕ-ին անդամակցությանը, ապա այդ գաղափարը պաշտպանում է հարցման ենթարկվածների 71 տոկոսը: Դեմ է արտահայտվել 17 տոկոսը, մնացած 11 տոկոսը այդ հարցում հստակ դիրքորոշում չունի:

ԵԹԵ ՎԱՂԸ ԱՆՑԿԱՑՎԵՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե վաղն անցկացվեին խորհրդարանական ընտրություններ «NDI»-ի հարցին, ապա «Վրացական երազանքի» օգտին կքվեարկեր - 20%-ը, «Ազգային շարժման»՝ 9%-ը, «Եվրոպական Վրաստան» եւ «Հայրենասերների դաշինքի»՝ 4-4%-ը:

Հարցին պատասխան չունի հարցվածների 26%-ը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ ԱՌԱՋԻՆԸ ԵԿԵՂԵՑԻՆ Է

Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) հետազոտությունների արդյունքում, հարցվածները հանրային ինստիտուտների շրջանում ամենաբարձր գնահատականն են տվել Վրաց ուղղափառ եկեղեցու (64%) եւ Արդարադատության տների (57%) գործունեությանը: Սրա հետ մեկտեղ, հարցվածների 53 տոկոսը դրական է գնահատել բանակի գործունեությունը, բացասաբար է արտահայտվել 42 տոկոսը: 10%-ը լավ է գնահատել դատարանների գործունեությունը:

Բացասական գնահատականի ամենամեծ ցուցանիշը՝ խորհրդարանի գործունեությանն է վերաբերում: Ըստ հարցման, 32 տոկոսը գնահատել է վատ, 10 տոկոսը՝ շատ վատ: 39 տոկոսը կարծում է, որ օրենսդիրը միջին մակարդակի է աշխատում, 8 տոկոսը դրական է համարում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՐՍԸ՝ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

NDI-ի հետազոտության համաձայն, հարցվածների 49 տոկոսը համարում է, որ երկիրը զարգանում է սխալ ուղղությամբ: 30 տոկոսը համարում է, որ չի փոխվում, իսկ 18 տոկոսը համարում է, որ երկիրը զարգանում է ճիշտ ուղղությամբ:

Հատկանշական է, որ վերջին 10 տարվա ընթացքում ամենացածր ցուցանիշ է գրանցվել այն մարդկանց թվում, ովքեր համարում են, որ Վրաստանը զարգանում է ճիշտ ուղղությամբ:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՅՈՀԱՆՆԵՍ ՀԱՆ. «ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ» ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ, ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՕՐԻՆԱԿ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նակարեւորը, դպրոցն ունի եվրոպական արժեքներ, ինչպես նաեւ միջազգային դիպլոմ, որը ճանաչվելու է աշխարհի բոլոր համալսարանների կողմից: Սա մեծ ներդրում է մեր կողմից, քանի որ Արեւելյան գործընկերության վեց երկրների ներկայացուցիչներ միասին կսովորեն, ինչպես նաեւ շատ կարեւոր է, այս ընդհանուր հանրակացարանը, որտեղ նրանք կկարողանան միասին հավաքվել եւ մոտիկից ծանոթանալ,- Վրաստանի կրթության նախարար Միխեիլ Բատիաշվիլու մասնակցությամբ Արեւելյան գործընկերության անդամ երկրներից բակալավրի աստիճանում ուսանողների հետ հանդիպմանը հայտարարեց Յոհաննես Հանը:

«Եվրոպական դպրոցի» շինարարությունը պետք է ավարտվի 2023 թվականին:

ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻՆ ՀԱՄԱՆԵՐՄԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐԵՑ ՄՈՐԱՏՈՐԻՈՒՄ

Սեպտեմբերի 18-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին մորատորիում հայտարարեց կալանավորների համաներման առնչությամբ:

Այս մասին Զուրաբիշվիլին հայտնել է նախագահի նստավայրում անցկացված մամլո ասուլիսի ժամանակ:

- Որպես նախագահ՝ ես հայտարարում եմ համաներման մորատորիում: Հետո տեսնենք, ինչպես կլինի, օրենքներն ինչպիսին կլինեն, եւ ինչպիսին կլինի համաներումը, ըստ դրա կսահմանվի: Եղել են բազմաթիվ շահարկումներ տարբեր մարդկանց միջամտության, այդ թվում՝ իմ խորհրդարանական քարտուղարի մասին, սակայն սա նրա իրավասությունը չէ, եւ նա չէր կարող միջամտել: Ես եմ կայացրել որոշում եւ մեկ ուրիշի վրա չեմ կարող բարդել պատասխանատվությունը,- հայտարարել է Սալոմե Զուրաբիշվիլին:

Նախագահի վերոնշյալ հայտարարությունը հաջորդեց վերջին համաներման շուրջ ծավալված բողոքի իրադարձություններին:

Հիշեցնենք, որ Սալոմե Զուրաբիշվիլին օգոստոսի 28-ին նշվող «Մարիամոբա» տոնի հետ կապված համաներում շնորհեց 34 դատապարտյալի, որոնց թվում էր 12 տարվա ազատազրկման դատապարտված Ռամազ Դեւաձեն: Նա իր պատիժն էր կրում Բաթումիում 22-ամյա ոստիկանին սպանելու համար: Ներման արժանացածների թվում է նաեւ 14-ամյա տղային սպանող եւ հետախուզման մեջ գտնվող անձը: Վերջինիս մասին տեղեկացրեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:

- Ես ակնկալում էի, որ այս անգամ եւս նախագահը կամ նրա վարչությունը մեզ հարց կուղղեին, թե արդյոք այս դատապարտյալը իսկապե՞ս տանը երեխաներ ունի կամ իսկապե՞ս հիվանդ է, արդյոք նա իսկապե՞ս քաղցկեղ ունի: Սակայն, նման հարցում չի կատարվել: «Մարիամոբա» համաներման ժամանակ մենք ստացանք նախագահի ստորագրած փաստաթուղթը, որտեղ նշված 24 հոգուց 23-ը ազատվեցին բանտից, իսկ մեկը՝ ոչ, քանի որ նա դեռ հետախուզման մեջ է գտնվում,- ասաց Թեա Ծուլուկիանին:

Նա չնշեց հետախուզման մեջ գտնվող անձի անունը, սակայն ասաց, որ նախագահի կողմից համաներում ստացածը հետախուզվում էր 2009-2010 թվականներից:

Մեկնաբանելով համաներման հարցով սկսված շարժումը՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց.

- Ինձ համար բացարձակ անընդունելի է ոստիկանին սպանողի կամ ընդհանրապես մարդասպանի ու ծանր հանցագործություններ կատարած անձանց համաներումը:

Նրա խոսքով, համաներման մեխանիզմն օրենսդրական փոփոխությունների կարիք ունի:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 16-ին «Եվրոպական Վրաստան» կուսակցությունը երկրի խորհրդարանի հաստատմանը ներկայացրեց Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ սահմանելու մասին բանաձեւը:

Այն ենթադրում է ԱՄՆ-ի եւ Եվրամիության կողմից Ռուսաստանի նկատմամբ լրացուցիչ պատժամիջոցների սահմանում, այդ թվում՝ պատժամիջոցների սահմանում բոլոր այն ընկերությունների նկատմամբ, որոնք տնտեսական գործունեություն են իրականացնում Աբխազիայի եւ այսպես կոչված Հարավային Օսեթիայի տարածքներում:

«Վրացական երազանք» կառավարող կուսակցությունը հանդես եկավ Ռուսաստանի նկատմամբ լրացուցիչ պատժամիջոցներ սահմանելու պահանջով ԱՄՆ-ին եւ Եվրամիությանը դիմելու «Եվրոպական Վրաստան» ընդդիմադիր կուսակցության նախաձեռնության դեմ:

Ինչպես նշեց կուսակցության խորհրդարանական խմբակցության ղեկավար Գիա Վոլսկին, ցանկացած երկիր, որը ճանաչում է Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանի անկախությունը, հայտնվում է ԱՄՆ պատժամիջոցների ներքո:

- Այդ ուղղությամբ լրացուցիչ քայլերը կհանգեցնեն Ռուսաստանի կողմից տնտեսական պատժամիջոցների,- հայտարարեց նա եւ հավելեց, որ ընդդիմադիր կուսակցության նպատակն իրականում ազնիվ նկատառումներից չի բխում, եւ այն, որ բանաձեւի ընդունումը լրացուցիչ պատժամիջոցների կհանգեցնի ՌԴ-ի կողմից, ընդդիմադիրներին հայտնի է:

- Եվրոպայի եւ Չինաստանի հետ ազատ առեւտրի մասին մեր պայմանագիրը եւ մեր արտահանման շուկայի ընդլայնումն անհնարադեպ է: Սակայն, գոյություն ունի նաեւ ռուսաստանյան շուկա, որը նույնպես զգալիորեն պայմանավորում է ոչ միայն Վրաստանի, այլեւ այն երկրների տնտեսական դրությունը, որոնց հետ մենք առեւտուր ենք անում,- նշեց Գիա Վոլսկին:



ՆԱԹԻԱ ՄԵԶՎՐԻՇՎԻԼԻՆ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ներքին գործերի նախարարի նախկին տեղակալ Նաթիա Մեզվրիշվիլին նշանակվել է Վրաստանի վարչապետի աշխատակազմի ղեկավար: Նաթիա Մեզվրիշվիլին այս պաշտոնում փոխարինել է Գիորգի Ճոլաձեին, որը հրաժարական էր տվել Մամուկա Բախտաձեի վարչապետի պաշտոնից հեռանալուց հետո:

Նաթիա Մեզվրիշվիլին 2017 թվականից զբաղեցնում էր ՆԳ նախարարի տեղակալի պաշտոնը:

ՎՐԱՍՏԱՆԻՑ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, 2019 թվականի հունվար-օգոստոսին Վրաստանից արտահանումը կազմել է 2 411 միլիոն դոլար, որը նախորդ տարվա նույն ցուցանիշից ավելի է 12,4 տոկոս:

Վրաստանից ԱՊՀ երկրներ արտահանվել է 1 274 միլիոն դոլարի ապրանք, որը 24,2 տոկոսով ավելի է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից եւ կազմում է երկրի արտահանման 52,8 տոկոսը:

Վրաստանից Եվրամիության երկրներ իրականացվել է 571,1 միլիոն դոլարի ներդրում, որը 25,3 տոկոսով ավելի է նախորդ տարվա նույն ցուցանիշից եւ կազմում է երկրի արտահանման 23,7 տոկոսը:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Վրաստանի ազգային բանկի տվյալներով, ընթացիկ տարվա օգոստոսին զբոսաշրջության սեկտորից եկամուտը կազմել է 396,1 միլիոն դոլար:

2018 թվականի օգոստոսին նշված ցուցանիշը կազմում էր 442,9 միլիոն դոլար: Համապատասխանաբար, նախորդ տարվա տվյալների համեմատ, եկամուտը նվազել է 10,6 տոկոսով:

Զբոսաշրջության եկամտի նվազումը (-13,3 տոկոս) ազգային բանկը գրանցել է ընթացիկ տարվա հուլիսին: Հունվարից մինչեւ հունիս նշված ցուցանիշն ուներ դրական միտում:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ 446 ԴԵՊՔ

Սեպտեմբերի 9-15-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի կողմից, երկրի ողջ տարածքով անցկացված ստուգիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 446 դեպք:

Մասնավորապես, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցները ստուգել են 3524 հարկատուի: Ստուգման արդյունքում, բացահայտվել են հարկային օրենսդրության հետեւյալ խախտումները. առանց ապրանքագրերի ապրանքների փոխադրման 125 փաստ, տնտեսական գործունեության իրականացման համար հարկատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի՝ 29 դեպք, կանխիկ գումարներով առքուվաճառքի ժամանակ՝ գանձարկղային սարքի անտեսման 292 փաստ:

ՏՐԱՆՍՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՀԱՄԱՏԵՂՎՈՒՄ ԵՆ ՋԱՆՔԵՐԸ

Թբիլիսիի «Քորթիարդ Մարիոտ» հյուրանոցում անցկացվեց ՄԱԿ-ի թմրանյութերի եւ կազմակերպված հանցագործության դեմ պայքարի բյուրոյի (UNODC) եւ համաշխարհային մաքսային կազմակերպության (WCO) համատեղ նախագծի (կոնտեյներների վերահսկողության ծրագիր) Սեւ ծովի տարածաշրջանային կառավարման խորհրդի երկրորդ տարածաշրջանային հանդիպումը:

Հանդես գալով հանդիպմանը՝ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետ Վախթանգ Լաշքարաձեն հայտարարեց, որ «Կոնտեյներների վերահսկողության ծրագրով» իրականացվեց տրանսսահմանային հանցագործությունների դեմ պայքարող իրավապահ հաստատությունների ջանքերի եւ ռեսուրսների համատեղում:

Նրա խոսքով, մաքսային կազմակերպությունների համար մարտահրավեր է մնում թմրանյութերի փոխադրումների թեման: Վախթանգ Լաշքարաձեի համոզմամբ, այդ առումով միայն մի երկրի ջանքերի միավորումը բավարար չէ, եւ անհրաժեշտ է ակտիվ միջամտություն ինչպես միջազգային, այնպես էլ՝ տարածաշրջանային մակարդակով:

- Օրինակ, մեր աշխատակիցների կողմից մշակված տեղեկատվության համաձայն, Կանադայում հայտնաբերվեց հաշիշի մեծ քանակություն: Օգոստոսին մեր տեղեկատվության հիման վրա, Թել Ավիվում մաքսային աշխատակիցները հայտնաբերեցին 22,2280 տուփ մաքսանենգային սիգարետ: Տեղեկատվության փոխանակման շնորհիվ, այս տարի կանխվել է Գերմանիայից շուրջ 9 կգ հաշիշ եւ հրազեն փոխադրելու փաստը,- հայտարարեց եկամուտների ծառայության ղեկավարը:

Նշենք, որ Վրաստանը առաջին երկիրն է, որտեղ ներդրվել է «Կոնտեյներների վերահսկողության ծրագիրը»:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍԿՍՎԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ԱԿՆԿԱԼՈՒՄ ԵՄ ՄԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՊՍԱԿՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Սիրելի դպրոցականներ, մանկավարժներ ու ծնողներ, եւ ընդհանրապես կրթության ոլորտի բոլոր անխոնջ մշակներ, շնորհավոր ուսումնական տարեսկիզբ: Այս օրը տոնական է բոլորիս համար, ոչ միայն իր գեղեցկությամբ, այլեւ խորհրդով, որովհետեւ, ո՞վ գիտի՝ հետագա ո՞ր գիտնականն ու գյուտարարը եւ կամ լավագույն մասնագետն է բացում դպրոցի կամ բուհի դուռը: Նինոծմինդայի մունիցիպալիտետը 2019/2020 ուստարին սկսում է 348 առաջին դասարանցիներով, որոնցից յուրաքանչյուրին Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը տրամադրել է համակարգիչներ եւ դասագրքեր: Շրջանի ռեսուրս-կենտրոնի տվյալներով, մեր ավարտականների գերակշիռ մասն արդեն Վրաստանի, Հայաստանի եւ այլ երկրների ուսանող է դարձել:

Տարին արդյունավետ էր նաեւ վերանորոգչական աշխատանքների տեսանկյունից: Նինոծմինդայի մունիցիպալիտետում տարածաշրջանային հիմնադրամի եւ պետական բյուջեի համաֆինանսավորմամբ, որոշ դպրոցներում իրականացվել են վերանորոգչական այլեւայլ աշխատանքներ: Այսպես, Նինոծմինդա քաղաքի թիվ 3 դպրոցում վերանորոգվել է սանհանգույցը, թիվ 4-ում՝ ընթացել են ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ: Սանհանգույցի խնդիրը լուծվել է նաեւ Փոկայի, Դիլիֆի, Փոքր Գոնդուրայի հանրային դպրոցներում, իսկ Օրոջալարի դպրոցում դուռ-պատուհանները փոխարինվել են նորերով: Նույն ծրագրի շրջանակներում, Սաղամոյի հանրային դպրոցի հին կտուրը փոխարինվել է նորով, իսկ Գորելովկայի թիվ 3 հանրային դպրոցի շենքի կառուցման համար հատկացվել է 459 591 լարի:

Վրաստանի կառավարությունն անընդհատ ուշադրության տակ է առնում կրթական ոլորտի հետ կապված խնդիրները՝ փորձելով լուծում գտնել: Իսկ մեր երեխաները մասնակցում են երկրում եւ արտասահմանում անցկացվող օլիմպիադաների, «Էտալոն» կրթական ծրագրին եւ տարբեր մրցույթների: Լիահույս եմ, որ այս ուստարին նույնպես արգասաբեր է լինելու: Կրկին անգամ շնորհավորում եմ՝ ակնկալելով մեր աշակերտների եւ ուսանողների հաջողություններով ու նվաճումներով պսակվող ուսումնառությունը՝ ի շահ մեր երկրի ու մեր հարազատ Նինոծմինդայի:

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ
Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ

ՈՒՍՈՒՄՆԱՌԱՏ ԺԱՄ, ՕՐ ՈՒ ԱՄԻՍՆԵՐ ՁԵԶ, ՍԻՐԵԼԻՆԵՐՍ....

Ուսումնառության առաջին օրը մասնավորապես գյուղերում մշտապես տոնի է վերածվում: Գալիս են ոչ միայն աշակերտներն ու նրանց ծնողները, այլեւ գյուղի ողջ բնակչությունը, որովհետեւ դպրոցի գոյությունն ու նրանում աշակերտների աճող կամ նվազող թիվն են կանխորոշում գյուղի ապագան: Արդ, Առաջին զանգը հնչեց նաեւ մեր՝ Ծալկայի մունիցիպալիտետի Ղզլքիլիսա գյուղի հանրային դպրոցի 18 առաջին դասարանցիների համար:

Ինչպես ամեն ուսումնական տարի, այս տարի եւս Վրաստանի եւ Հայաստանի օրհներգերի ու հնչող շնորհավորանք-բարեմաղթանքների ներքո, մենք գրկաբաց ընդունեցինք դպրոցի 154 աշակերտի՝ ճանապարհելով 12 շրջանավարտների, այդ թվում՝ երկու մեդալակրի: Ուրախությամբ փաստեմ, որ նրանցից երեքը Թբիլիսիի Իլիայի համալսարանի ուսանողներ են, իսկ մեկը կսովորի Երեւանի բուհերից մեկում: Այդ օրը հուզված էինք բոլորս՝ դպրոց ընդունված նորեկներն ու նրանք, ովքեր առաջին անգամ չէ, որ բացում էին դպրոցի դուռը: Երեւի նրանից էր նաեւ, որ ճանապարհում էինք մեր 6 վաստակաշատ մանկավարժների, ովքեր մասնակիցը դարձան կենսաթոշակային դրամական պարգեւի՝ հրաժեշտ տալով իրենց հարազատ դպրոցին: Այդուհանդերձ, կյանքի օրենքի համաձայն, մենք ուրախանում էինք, որ նրանց փոխարինելու եկավ 4 երիտասարդ մասնագետ, որոնցից մեկն իր բաձրագույնն ավարտել էր Թբիլիսիում, իսկ երեքը՝ Հայաստանում:

Մեր դպրոցը 40-ից ավելի տարիների պատմություն ունի: Շենքը գործում է 1978 թվականից: Ու թեեւ շրջանում ամենամեծն է համարվում, վերանորոգման խիստ կարիք ունի: Վերջին անգամ, եւ սա մի քանի տարի առաջ, դպրոցում նորերով փոխարինվեցին պատուհանները...

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ, սիրելիներս, շնորհավորում եմ բոլորիդ:

ԱԶՆԻՎ ՈՍԿԱՆՅԱՆ

Ծալկայի մունիցիպալիտետի Ղզլքիլիսա գյուղի հանրային դպրոցի տնօրեն

ՎԱՆՔԻ ԴՊՐՈՑՈՒՄ ՀՆՉԵՑ 83-ՐԴ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ

Չեւի եւ բովանդակության, պայծառ գույների ու սեւ-սպիտակի, ուրախության եւ թախծի ներդաշնակությամբ Գիտելիքի օրը բացվեց նաեւ մայրաքաղաքի թիվ 104 հանրային դպրոցում:

21 առաջին դասարանցի՝ վաստակաշատ մանկավարժ Լամարա Ղազարյանի դասավարությամբ ու նրանց թիկունքին, էստաֆետը փոխանցող 21 ապագա շրջանավարտ (դասղեկ՝ Մարինա Արշակյան), մեկը՝ երկյուղած, մյուսը՝ վստահ կանգնած էին Առաջին զանգի հանդիսավոր արարողությանը՝ զգաստանալով Վրաստանի եւ Հայաստանի օրհներգերը երգելիս:

2019/2020 ուսումնական տարվա հենց առաջին օրը թիվ 104-ի պատմության մեջ հատկանշական էր եւս մեկ իրադարձությամբ՝ իր հարազատ դպրոց ոտք դրեց քսան տարի առաջ այդ կրթօջախի սան ու այժմ արդեն Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ, 37-ամյա Կիրակոս վարդապետ Դավթյանը: Նա իր օրհնության խոսքը բերեց նախ իրեն կրթած եւ առայսօր դպրոցում աշխատող մանկավարժներին, ապա նաեւ դպրոցականներին՝ հորդորելով սովորել, երբեք չնահանջելով եւ հավատարիմ մնալով դպրոցին, ազգին ու պետությանը:

Ուսումնառության առաջին օրը նրանց ու մյուս 300 հարյուրչորսականներին մայրաբար ողջունեց եւ անխափան երթ մաղթեց դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը, ում ջանքերով դպրոցում այս տարի եւս իրականացվեցին վերանորոգչական աշխատանքներ, եւ այն կազմ ու պատրաստ իր գիրկն առավ դպրոցականների հերթական հոսքը: Նրանց, ծնողներին ու մանկավարժներին իրենց ելույթներում շնորհավորեցին եւ բարին մաղթեցին «Վրաստան» թերթի խմբագիր, «Վրաստանի հայերի միության» փոխնախագահ Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության փորձագետ Կարինե Մանուկյանը, «Հայարտուն» կրթաշմակութային կենտրոնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանը, Վրաստանի կրթության ոլորտի բազմավաստակ գործիչ Նորայր Բաղդասարյանը, «Վրացահայերի միություն» հասարակական կազմակերպության նախագահ Մարի Առաքելովան, ով, ի դեպ, իր առաջնեկին նույն դպրոցի առաջին դասարանն էր բերել:

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ

ԻՆԸ ԺՐԱՋԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐ...

Սեպտեմբերի 16-ին, Գիտելիքների օրը շնորհավորելու առիթով, մայրաքաղաքի թիվ 103 դպրոց այցելեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, տողերիս հեղինակը:

Դպրոցի տնօրեն Արչիլ Չխաիձեի, ուսմասվար Հասմիկ Պապիկյանի առաջնորդությամբ՝ հյուրերը եղան առաջին դասարանում, ուր գիտելիքներ ստանալու են եկել 9 ժրաջան փոքրիկներ: Փոքրիկները արտասանեցին բանաստեղծություններ, ցուցադրեցին իրենց վրացերենի իմացությունը, մանկական անմիջականությամբ պատասխանեցին իրենց ուղղված հարցերին՝ արժանանալով ներկաների խրախուսանքին: Այցելուները ուսման նկատմամբ մեծ ձգտում, անսպառ հետաքրքրություն ցուցաբերելու բարեմաղթանքներ հղեցին նորաթուխ դպրոցականներին:

Հաջորդ հանդիպումը 11-րդ եւ 12-րդ դասարանցիների հետ էր: Ակներեւ էր, որ Առաջին զանգի ղողանջները նոր լիցք էին հաղորդել ու նորովի իմաստավորել դպրոցականների սրտերը: Զրույցի ընթացքում ավարտական դասարանցիները խոսեցին իրենց ապագա ծրագրերի մասին: Հասմիկ Պապիկյանը ներկայացրեց Համավրացական «Վրաց լեզվի» օլիմպիադայում հաղթանակածներ Ժանետա Բաղդասարյանին եւ Արմինե Հախոյանին, նաեւ նախորդ ուստարվա դպրոցի «Լավագույն աշակերտ» տիտղոսին արժանացած Լիանա Էլիբեկյանին:

12-րդ դասարանցիները խոստացան բարձր ցուցանիշներով ավարտել դպրոցը, արժանապատվորեն շարունակել կրել երկրի քաղաքացու պատվավոր անունը:

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության փորձագետ

ԲԱԹՈՒՄԻ. ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԸ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է ԴԱՐՁԵԼ

Սեպտեմբերի 16-ին Բաթումիի հայկական համայնքում նորից տոն էր: Չէ՞ որ արդեն երկրորդ տարին է, ինչ մեծ ջանքերի շնորհիվ, բացվում է վրաց-հայկական դասարան:

Բաթումիի հայ մանուկները, դառնալով դպրոցական, առաջին օրվանից եւ մինչեւ դպրոցի ավարտ՝ 12-րդ դասարան, հնարավորություն ունեն սովորել իրենց մայրենին՝ հայերենը: Սա իսկապես մեծ ձեռքբերում է, որի համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Վրաստանի կառավարությանը, Աջարիայի իշխանություններին, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցու հովվությանը եւ «Վրաստան» թերթին:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)